

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

	PAGE
ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՏԵՂ.	
***. — Ն. Ս. Յովհաննէս ԻԳ. Պապը և Լա- ճիւրը	1
ՊԱՏՄԱԿԱՆ	
ԱՆԱՆԵԱՆ Լ. ՊՅՂՈՍ. — Ս. Գրիգոր Լուսա- ւորչի ձեռնադրութեան թուականը և պա- րագաները	9
ՔՈՐԲՈՒԼԻ ԴՈՄՈՆԿՈՍ. — Փերէշեցի Լա- տիւրա Նաաիի գնահատանքը Հունդարա- հայերու մասին	24
ՔԻՒՐԸԵԱՆ Յ. — Քանի մը փոքր յաւելումներ «Բաբակ եւ Սահլ Իպն Սնբատ» ձեռագրու- թեան	33
ՀՆԱԽՕՍԱԿԱՆ	
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Լ. ՄԻՔԱՅԷԼ. — Հայաստա- նի բերդերը	29
ԳՐԱԿԱՆ	
ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ Լ. ՍԱՀԱԿ. — Արշակ Թա- ղաւոր: Երգախառն ողբերգութիւն՝ հինգ աբարով: (Շար.)	35
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ՔԻՒՐԸԵԱՆ Յ. — «Յուդայի ձեռագրաց Անկիւ- րիոյ Կարմիր վանուց եւ Շրջակայից» Բարդէն Աթոռակից Կթղ. Կիւլէսէրեանի.	46
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
***. — Քահանայապետական ունկնդրու- թիւն (1 Փետր. 1959)	6
ARTICLE DE FOND	
*** *** — S. S. le Pape Jean XXIII et les Ar- méniens	1
HISTOIRE	
ANANIAN P. PAUL — La date et les circons- tances de l'Ordination de St. Grégoire l'Illu- minateur	9
KORBULY DOMONKOS — L'appréciation de László Nagy de Pecsény au sujet des Armé- niens de l'Hongrie	24
KURDIAN H. — Appendices à l'étude sur «Ba- bak et Sahl Ibn Senbat»	33
ARCHEOLOGIE	
HOVHANNESSIAN P. MICHEL — Les forte- resses de l'Arménie	29
LITTERATURE	
DER MOVSSESIAN P. SAHAK — Le Roi Ar- chak. Tragédie en cinq actes (Suite)	35
RECENSIONS	
KURDIAN H. — «Catalogue des Manuscrits de Karmir Vankh d'Angora et des environs» de Co-Catholikos Babghen Kulesserian	46
ECHO ARMENIEN	
*** — Audience papale (1 Février, 1959)	6



1843 ~ 1959
ՃԺԷ. ՏԱՐԻ

ԹԻՒ 1 - 2

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXVII^e année, 1959, N. 1 - 2 Janvier - Fevrier

Ն. Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻԳ. ՊԱՊԸ

ԵՒ

ՀԱՅԵՐԸ

Հատ' խօսուած Ն. Ս. Յովհաննէս ԻԳ. Սրբգ. Քա-
հանայապետին կողմէ, Հայոց տուած ունկնդրու-
թեան առիթով, 1 Փետր. 1959ին:

Այս մեր հոգեխառն հանդիպումը հայ ժողովուրդի ներկայացուցիչներուն
հետ՝ արդարեւ կ'արթնցնէ այնպիսի զգացումներ, որոնք յուզումով կը հա-
մակեն մեր սիրտը. տարիներ ու տարիներ աշխարհի վրայ շրջելու միջոց՝ կը
հանդիպինք Հայերու եւ Հայերու, միշտ տեսական երբեմնի մէջ, եւ յաճախ
նաեւ տառապանքի մէջ. ու մտաբերելով անոնց փառապանք եւ հնաւանդ ան-
ցեալը, հետեւելով անոնց կեանքի ներկայ իրադարձութիւններուն, արդարեւ
մեր մտածութիւնը կու գայ եզրակացնել թէ Աստուած այս սիրելի Հայերուն
հետ է միշտ, որոնք աւանդապահներն են հարստութեան մը, ու հաւատով
կը նային դէպի ապագան. եւ այդպէս ալ պէտք է ըլլայ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՅՈՑ ՀԵՏ

Ս. Ղազարու Միսիքարեան Հայերն եղան՝ կը հասկցուի՝ այն Հայերը,
որոնց հանդիպած ենք առաջին անգամ, եւ որոնց հետ հոգեկան այնքան սերտ
կապեր ունեցանք լնակի ափերուն՝ այս երջանիկ վեց տարիներու ընթացքին:
Բայց նաեւ Պուկարիոյ մէջ, ըլլա՛յ Ֆիլիպէ, ըլլա՛յ նաեւ աւելի հիւսիսը՝

Ռուսմանիոյ սահմանակից Հայերուն հետ ունեցած ենք երկար յարաբերութիւններ. հոսկ Պոլսոյ մէջ աւելի շատցան նման հանդիպումներ:

Այո՛, Պոլսոյ մէջ մեզի շատ սիրելի էին անոնք. յաճախ կը գտնէինք զիրենք «չարշը»ին մէջ – այն ատեն հնարաւոր էր մեզի հոն իջնել – ուր Հայերը կը ծախէին սրբազան իրեղէններ, խաչեր. միշտ ազնուութեամբ եւ սրտաբաց կը ներկայանային մեզի, եւ անկեղծօրէն կը յայտարարէին երբ առարկան մեծ արժէք մը չէր ունենար:

Մեր յիշողութեան մէջ արթնցան այս բոլորը՝ երբ քիչ առաջ նուիրեցիք մեզի այդ սքանչելի Աւետարանը, որ իսկապէս մեծարժէք է: Բայց ամէնէն աւելի երբ կը նկատեմք սիրտը որ կ'ընկերանայ ձեր նուէրին, եւ զգացումները որ ձեր հոգիներէն կը բարձրանան, մեր մէջ եւս կ'արթնան սիրոյ եւ բարեացակամութեան նման զգացումներ. ուրեմն քոյլ տուէք որ ներկայացնեմք մեր լաւագոյն մաղթանքները ձեզմէ իւրաքանչիւրին եւ ձեր մեծ Հայրենիքին:

ՏՕՆԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վաղը Տեառնընդառաջի տօնը պիտի կատարենք. տօն մը՝ որու խորհուրդը կը ներկայացնէ ձերունին եւ Մանուկին հանդիպումը: Երբ մարդ տարիք կ'առնէ, ստէպ կը յիշէ երիտասարդութիւնը եւ կը տենչայ երիտասարդական բան մը արտայայտել. ահա ասիկա վաղուան տօնին ծիսակատարութեան մէջ յատկապէս մատնանշուած է. «Senex puerum portabat, puer autem senem regebat». Թէեւ լատիներէն է այս, հայերէն չէ, բայց շատեր շատ լաւ կը հասկընան. «Ծերունին կը կրէր Մանուկը, իսկ Մանուկը վեր կը բռնէր ձերունին»: Լաւ խորհրդածեցէք. Նախախնամութեան մէկ խորհուրդն է ձեր պատմութիւնը, ձեր անցեալը ցաւագին. դարե՛ր արցունքի, դարե՛ր արիւնի. եւ դուք, ձեր նախահայրերուն հետ կը կրէք Քրիստոսի պատկերը, ցաւատանջ Քրիստոսի պատկերը: Բայց այս տառապանքին մէջ է գաղտնիքը, գաղտնիքը կեանքի եւ տեսականութեան, գաղտնիքը զօրութեան եւ արժանապատուութեան: Ու պիտի աւելցնենք, այս բոլորին ի տես, քէ Հայերը՝ որոնք աշխարհի չորս ծագերը կը շրջին յուսալիր, իրենց պանդխտութեան վերջալոյսին՝ անհատաբար, ու նաեւ, կը մաղթենք, ազգովին պիտի վարձատրուին երկնքի փառքերով: Ասիկա պէտք է քաջալերէ եւ զօրացնէ մեր քրիստոնէական զգացումը, ձեր քրիստոնէական զգացումը. ասիկա պէտք է նաեւ վառէ ոգին ձեր ազգին, որ Քրիստոսի ինքնին մէկ վկայութիւնն է. վկայութիւն կրօնական եւ առաքելական աւանդութեան մը, միշտ աւելի անեցուն՝ Աւետարանի քափանցումով, որ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ ծաւալում շնորհքի եւ սիրոյ:

ՄԵՐ ԾԻՐԱՆԱԽՈՐԸ

Ի՞նչ կընամք ձեզի ըսել. կ'ուզենք վերյիշել քանի մը հայ անձնաւորութիւններ որոնց հանդիպած ենք – բոլորդ ալ պատկառելի անձնաւորութիւններ, որ հոս ներկայ էք – սկսելով անկէ որ ամենաինքնին, եւ քաջաբարձր ծաղիկն է



1601-71



Ն. Ս. Յովհաննէս ԻԳ. Սրբգ. Քահանայապետը՝ հայ կաթ. եկեղեցւոյ Նուիրապետութեան, եկեղեցականներու, միանձնուհիներու եւ ժողովուրդին հետ
(1 Փետր. 1959, Վատիկան):

հայ եկեղեցւոյն եւ հայ Ազգին. ձեր Ծիրանաւոր Աղանանեանն է այդ, որու հետ յարաբերութիւններ ունեցած ենք մեր երիտասարդութենէն, այն օրերէն՝ երբ տակաւին նոր կը հնչէր Նախախնամութեան ձայնը, որ զինք պիտի կոչէր օր մը հայ ժողովուրդի պատմական մեծ անձերու կարգը դասելու:

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Բայց աւելի ետ երբայով, Պուկարիոյ մէջ քանչեւ ենք նաեւ – ու միշտ պիտի յիշենք զինքը, միշտ – Նիկոմիդիոյ նախկին Առաջնորդը, որ այն ատեն 90ամեայ էր, եւ Սոփիայի Հայոց հոգեւոր հովիւ ընտրուած էր, մինչ Ֆիլիպէն իր առանձին Առաջնորդն ունէր: Այդ եկեղեցականը, Ստեփանոս Արքեպս. Յովակիմեանն էր, որ իսկապէս օրինակ եղած է մեզի իր անսահման պարզութեամբ, անկեղծութեամբ, բարութեամբ, մանաւանդ իսկական բարութեամբ: Ինք Լուսաւորչական, սակայն լաւ կը յիշենք, օր մը ըսաւ մեզի. «Գիտցէք որ մենք Հայերս միշտ կը յարգենք Ս. Պետրոսի յաջորդը, եւ շատ

լաւ գիտեմք որ հո'ն է, հո'ն է այն գլխաւոր կեդրոնը. եւ երբ Հոռոմ երբեք-
կը խնդրեմ, շատ կը խնդրեմ, իմ տեղս՝ Սրբազան Պապին ոտքը համբուրե-
ցէ՛ք » . եւ ապա աւելցուց իւրայատուկ բանաձեւով մը . « Սիրտն ալ, երեսն
ալ համբուրեցէ՛ք, եւ այս նկարս ալ ցոյց տուէ՛ք » . կը խօսէր պարզօրէն, տա-
լով նաեւ իր նկարը, այնպիսի սիրալիր բացատրութիւններով, որոնք իսկապէս
յուզեցին մեզ, տեսնելով այդ պատկառելի ծերունին, որ յիսուն տարի Նիկո-
միդիոյ Արքեպիսկոպոս եղած էր . եւ ինչպէս ինք կ'ըսէր, շատ քահանաներ
ձեռնադրած էր, եւ յանձն առած էր մնալ Իզմիտ, որքան ատեն Հայ մը մնա-
ցած էր հոն . եւ անկէ վերջ միայն հեռացեր էր իր թեմէն :

Եղաւ որ մենք Հոռոմ եկանք, խօսեցանք իր մասին Ս . Քահանայապետին՝
Պիոս ԺԱ . ի մօտ, ներկայացուցինք նաեւ միասին բերած նկարը եւ նաեւ կնիքը
– կնիքն ալ տուած էր Յովակիմեան Սրբազան, այն՝ գոր գործածեր էր իր
հովուութեան շրջանին – ու կրկնեցինք Սրբազան Պապին դիմաց այն անոյշ
խօսքերը գոր լսեր էինք . Պապը յուզուեցաւ, փոխադարձ սիրոյ խօսքեր ուղղեց,
դարակներուն մէջէն գեղեցիկ մետալ մը դուրս հանեց, որուն մէկ երեսին
վրայ Սրբգ . Պապին դէմքը փորագրուած էր, միւս երեսին վրայ՝ Բարի Հո-
վիւր, որ ուսերուն վրայ առած կը տանէր գառնուկը : Ու Պապը կ'աւելցնէր .
« Կը յուսամ թէ հանելի կ'անցնի, թէեւ փոքրիկ է » : Յետոյ տուաւ նաեւ
դրամ – խնդրեմ ուշ դրէ՛ք այս մանրամասնութեան – Սրբազան Պապը գումար
մը տուաւ Յովակիմեան Սրբազանի աղփատներուն համար, անոր հովուական
պաշտօնին մէջ օգնելու նպատակով : Մենք մետալն ու գումարը տարինք Պուլ-
կարիա : Սրբազանը ուրախութեամբ առաւ մետալը, գեղեցիկ ժապաւէն մը ան-
ցուց եւ կուրծքին կախեց, իբրեւ պատուաւոր շքանշան մը, եւ ձեռքը սրտին
վրայ դնելով կ'ըսէր . « Այստեղէ՛ն, այստեղէ՛ն է որ իսկապէս կը մօտենանք եւ
կ'ապրինք Քրիստոսի հետ » :

Աւելի ուշ, երկրորդ այցելութեան մը առիթով, Յովակիմեան Սրբազան
ետ կը դարձնէր Ս . Պապին դրկած այդ գումարը, ոչ թէ որովհետեւ հանելի
չէր, այլ որովհետեւ իր ժողովուրդին մէջ աղփատ մարդ չկար . բոլորը հա-
րուստ են, կ'ըսէր, եւ թէ այդ դրամով կարելի էր ուրիշ կարօտեալներու օգ-
նել : Եւ այս բոլորը այնպիսի պարզութեամբ եւ ազնուութեամբ, որ յուզուած
մնացինք :

Այդ շրջանին տօն մըն ալ հանդիպեցաւ . Յովակիմեան Սրբազան փափաք
յայտնած էր որ մենք ալ մասնակցէինք՝ բայց դժբախտաբար, դիւանագիտա-
կան վիճակի մեր զբաղմունքները թոյլ չտուին :

Քանի մը ամիս վերջ լուր առինք որ վախճանած էր . իսկոյն փութացինք
այցելելու . իսկապէս խեղճ ու աղփատին տեղ մը դրած էին մարմինը . մութ
անկիւն մը գետեղած էին դագաղը . խեղճ ծերունի . եւ ձեռքերը տակաւին
աղօթքի վիճակի մէջ էին . երկիւղածօրէն աղօթեցինք իր հոգւոյն համար .
ու նշմարեցինք որ Սրբգ . Պապին դրկած մետալը կը փայլէր կուրծքին վրայ .

կը փափաքէր թաղուիլ այդ մետալով . գոհացում տուած էին :

Ձեռք կրնար մոռնալ այս եկեղեցականը . միւս կողմէ չենք կրնար նաեւ
սահմանափակել մեր մտածութիւնը, որովհետեւ կը խորհինք թէ բոլորը, բո-
լոր Հայերը, հաւատարիմ իրենց Հայրերէն ուսած հին աւանդութեան, վառ
կը պահեն միշտ այս հաւատքը տեսական :

ԻՂԶ ԵՒ ՄԱՂԹԱՆՔ

Հետեւաբար չենք կրնար չմաղթել որ հայ երկու զանգուածներուն միջեւ,
Լուսաւորչական թէ Կաթողիկէ, տեղի ունենայ մերձեցում մը, որ կը կար-
ծենք, ուրախութեան եւ օրհնութեան աղբիւր պիտի ըլլայ :

Յանախ նկատած ենք, զանազան առիթներով, վեներտիկ, հոս Հոռոմ, կամ
այլուր, թէ երբ Հայերը իրարու կը հանդիպին՝ կ'ամբաստանեն իրենց հայու-
թիւնը, կը հաստատեն իրենց հաւատքը « ի Հայրն ամենակալ, յՈրդին միա-
ծին՝ որ մարմնացաւ վասն մեր, եւ ի Ս . Հոգին » : Յուսալի է, ուրեմն, որ
միութիւնը իսկապէս տեղի ունենայ եւ կատարելապէս : Դուք զիս կը հասկը-
նաք . եւ եթէ հոս կան նաեւ Լուսաւորչական Հայեր, անշուշտ պիտի չդժկա-
մակին՝ որ մենք ա'յսպէս կ'արտայայտուինք . ի վերջոյ, չունինք արդեօք
բոլորս ալ մեր առջեւ Քրիստոսի պատկերը՝ որ անդադար կը գոչէ . « Զի եղի-
ցին մի, որպէս եւ մեք մի եմք » :

Կ'աւարտեմ՝ վերադառնալով երուսաղէմի տաճարի մուտքին, նկատելով
անգամ մըն ալ ծերունին՝ որ կը կրէ Մանուկը, ու նշմարելով Մանուկը՝ որ
կը գեղու իր շնորհները ծերունիին սրտին մէջ : Եւ այսպէս երջանիկ պիտի
ըլլանք ծերունիներս եւ երիտասարդներդ . առաջինները, որովհետեւ ի սպաս
Աստուծոյ գոհաբերուած կեանքէ մը վերջ, կը սպասեն այն օրուն՝ երբ Աստ-
ուած պիտի վարձատրէ զիրենք տալով իր յաւիտեական հանգիստը . եւ յառ-
կապէս երիտասարդներդ՝ պատիւ բերելու համար անցեալի աւանդութեան .
այնպէս որ ամէնուրեք եւ ընդմիշտ փառաւորութիւն Աստուծոյ, իր Փոխանորդը
երկրիս վրայ, եւ Կաթողիկէ Առաքելական ու Տիեզերական Սուրբ Եկեղեցին :

Ծանօթ . Խմբ . — Սոյն ճառին թարգմանութիւնը կատարուած է մագնի-
սադրոյժ ժապաւէնի վրայէն, աչքի առջեւ ունենալով L'Osservatore Romano
օրաթերթին Փետր . 2ի թիւը : Ուր մենք « Լուսաւորչական » թարգմանած ենք՝
Սրբազան Պապը գործածած է gregoriano բանաձեւը :